

ԱՂԹՈՒՄ ԵՄ

Posted on May 8, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Երբ ժողովուրդն երամ երամ հաւաքւում է ու բողոքում, տանս նստած, սրտիս խորքից աղօթում եմ:



Երբ երկիրս են անխղճաբար բորենիները թալանում, ես դեռ չոքած անկողնուս մօտ աղօթում եմ:

Երբ ժողովուրդն երամ երամ հաւաքւում է ու բողոքում, տանս նստած, սրտիս խորքից աղօթում եմ:



Երբ երկիրս են անխղճաբար բորենիները թալանում, ես դեռ չոքած անկողնուս մօտ աղօթում եմ:

Երբ որ ազահ, անգութ մարդիկ կուտակում են հարստութիւն, եկեղեցու խորհրդաւոր սրահի մէջ աղօթում եմ:

Երբ աղքատը խեղճ ու կրակ, ձեռք է մեկնում ունեւորին, ինչպէս եւ միշտ, խոր հաւատքով աղօթում եմ:

Երբ լաւ մարդիկ քայլ են առնում որ երկիրը բարգաւաճի, ես էլ նրանց յաջողութեան, պարզ ու անկեղծ աղօթում եմ:

Երբ տեսնում եմ ցաւօք սրտով քայքայւում է մի ընտանիք, ես տրտմորեն, խորը վշտով աղօթում եմ:

Տեսնում եմ որ արդարութեան խախտումները շատանում են, սակայն ես դեռ մաքուր սրտով աղերսանքով աղօթում եմ:

Իմ դրացին պաշտպանում է հայրենիքս թշնամու դէմ,

Ես էլ նստած աներեւոյթ թշնամու դեմ աղօթում

եմ:

Խիղճս հանգիստ աղօթում եմ եւ վստահ եմ սրտիս խորքից,

ՏԵՐ ԱՍՏՎԱԾՆ Էլ հաւատացեալ անձի համար աղօթում է:

Վ. Ծ.

Թորոնթո,

30 Ապրիլ

2018

